ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ, ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մեր հառաջիկայի գործունեության հորիզոնի վրա առաջին հիմնական մեր անելիքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրության կամ քրիստոնեական կրոնի պետական ճանաչման 1700-ամյակի կազմակերպումի գործն է: Բոլորդ էլ տեղյակ եք, որ նման պատիվ և միանգամայն նման դրական մարտահրավեր աշխարհումս ոչ մի ազգ չունի, բայց միայն մեր ժողովուրդը: Մոտենում է 2000-ամյակի ավարտը և սկսելու է 3000-ամյակը: Աշխարհումս Եկեղեցիներ, պետություններ, միջազգային կազմակերպություններ արդեն իսկ ծրագրում են մեծածավալ տարողությամբ այնպիսի ձեռնարկներ կազմակերպել, որոնք մարդկության և քրիստոնեական Եկեղեցու վերստին առողջացման, բարոյական մաքրության կամ հառաջադիմության ձգտումներով են առաջնորդվում: Եթե մենք միջազգային մամուլին հետևում ենք, տեսնում ենք, որ մարդիկ, ազգեր, պետություններ, Եկեղեցիներ, կրոններ, միջազգային կազմակերպություններ մտածում են, թե ինչ ձևով, ինչ հաշվետվությամբ կարող են փակել 2000-ամյակը և ինչ հեռանկարներով կարող են բացել 3000-ամյակը: Այս բոլոր ազգերի շարքում միայն մեր ազգն է, որ 2001 թվին կարող է տոնել 1700-ամյակ, որովհետև աշխարհումս ճանաչվել ենք քրիստոնեական հավատքը որպես առաջին պետական ազգային կրոնք հռչակած ազգը: Ուրիշ խոսքով՝ մենք պետք է բացառիկ կարևորությամբ և համազգային անխտրական ոգով ու ծրագրյալ արդիական մեթոդներով համակարգյալ գործնական աշխատանքի ըմբռնողությամբ լծվենք գործի:

Ասված հոգին լուսավորի մեկ անգամ ևս Վազգեն Առաջին Հայրապետին: Անցնող տարի Մայիսին նա հրավիրեց Մեզ Ս. Էջմիածին որպես Կիլիկիո Կաթողիկոս, հրավիրեց Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքներին: Մենք այստեղ երկու օրերի ընթացքում խորհրդակցություններ ունեցանք, այդ երկու օրերի ընթացքում մենք որոշ ծրագրումներ, ավելի ճիշտը ծրագրի ուղղություններ ճշտեցինք և հանձնախումբ կազմելու, մե՛կ հանձնախումբ բոլոր նվիրապետական Աթոռների մասնակցությամբ և ոչ թե ոևէ մեկ նվիրապետական Աթոռ իր սեփական ծրագիրը մշակելու և գործադրելու նպատակով, այլ մեկ մարմին. այդ մեկ մարմնի միջոցավ պետք է կազմակերպվի ամբողջ աշխատանքը, այսինքն՝ կենտրոնական մարմին 1700-ամյակին: Մեր առաջին գործը պիտի լինի, որ այդ հանձնախումբի անդամները նշանակվեն և գործի լծվեն:

Ես ուրախությամբ տեղեկացա և բարձր գնահատանքով ողջունում եմ մեր հայրենի պետության այն որոշումը, որով 24 հոգիներից բաղկացած կենտրոնական մարմին է գոյացրել և այդ մարմնին միջոցավ աշխատանք է տարվել և տարվում է գործակցաբար Եկեղեցու հետ: Ուրիշ խոսքով՝ խորհրդակցաբար միշտ Սուրբ Էջմիածնի հետ, որի կողմից ներկա են գտնվել ներկայացուցիչներ պետության կողմից նշանակված 1700-ամյակի աշխատանքների ծրագրումի համար. արդեն մի շարք աշխատանքներ տարվել են, ծրագիրներից որոշ մասը գործնական հունի մեջ է մտել:

Բարեկամներ, այստեղ ժամանակը չէ անշուշտ ինձի համար և ոչ էլ դուք ժամանակ ունեք մանրամասնությունների մեջ մտնելու, բայց չէ կարելի այս հիմնական և եզակի առիթը փախցնել: Ամբողջ Միջին Արևելքում, Փոքր Ասիայի այս ծայրամասում, Կովկասի այս տարածաշրջանում ինչպե՞ս պատահել է, որ մեր հայրերը կարողացել են այդ քրիստոնեական հավատքը «ղայիմ» բռնել, (թույլ տվեք ինձի այդ բառը), ամուր պահել և ոչ թե միայն պահել, պահպանել իմաստով, այլ ստեղծագործությամբ հառաջ տանել, զարգացնել: Երբ մարդ պտտվում է Հայաստանի չորս կողմերը և տեսնում է կղզիների վրա, լեռնալանջերին, ձորերում այն եկեղեցիները, որ կառուցվել են, երբ մարդ մտնում է Մաշտոցյան Մատենադարանը և տեսնում է ձեռագրերը, երբ մարդ պտտվում է Հայոց գերեզմանատները և տեսնում է խաչքարերը, իբր կարդում է մեր մատենագրությունը, տեսնում է մեր մանրանկարչությունը, լսում է մեր երաժշտությունը, այս ամբողջ քրիստոնեական մշակույթը, հարց է տալիս. ի՞նչ ձևով, ի՞նչ արժանիքով, ի՞նչ կարողություններով, ի՞նչ պայմաններով, ի՞նչ միջոցներով մենք այս բոլորն իրագործեցինք: Սա մեր ժողովրդի գիտակցությանը մեջ պետք է թափանցի ներկա, ապրող և գալիք սերունդներին: Ես եղել եմ Ամերիկայում, երբ Ամերիկան տոնեց իր 200-ամյակը: Դրանից տարիներ առաջ մեր Երևանը տոնել էր իր 2750-ամյակը: Դուք չեք կարող պատկերացնել, թե ամերիկյան ազգի համար ի՞նչ մեծ հոգեկան, բարոյական, ազգային բարեփոխություն առաջ եկավ այդ 200-ամյակի առիթով, երբ 7000 ծրագիրներ մշակվել էին. ես տեսել եմ այդ 7000 ծրագիրների չորս հատորները. էդ 7000 ծրագիրները բոլորն էլ իրողապես գործադրվեցին, որպեսզի ամբողջ 200 տարվան ժառանգությունը չդառնա սոսկ հիշողություն, այլ լինի մղիչ ուժ, ներշնչող զորություն, ներկայումս ապրվող և ապագային ապրվելիք կյանքի համար:

Անցյալը, երբ լեցուն է՝ նորին, ներկային համար դառնում է մեծ ուժականություն: Պետք է, որ մենք, 2000-րդ տարին չհասած, մեր աշխատանքները կատարենք և շատ ավելի մեծ տարողությամբ պետք է անենք, որովհետև մի սովորական իրադարձություն չէ, որ նշելու ենք, այլ 1700-ամյակ ենք տոնելու: Ինձ վիճակվել է բախտավորությունը Վազգեն երջանկահիշատակ Կաթողիկոսին հետ գտնվել նաև Ռուսիայում, Մոսկվայում, մեր քույր Ռուս Եկեղեցու 1000-ամյակի տոնակատարության: Այնտեղ տեսա, թե ի՞նչ մեծ նորոգում եղավ այդ երևույթը, այդ դեպքը ռուսական մեծ օրթոդոքս Եկեղեցու համար:

Հետևաբար 1700-ամյակի տոնակատարությունը պետք է լինի մեր գործունեության առաջին դաշտերից մեկը:

Երկրորդն է մեր Եկեղեցու ներքին ուժեղացումը, հոգևոր արժեքների, քրիստոնեական ճշմարտությունների, Ավետարանական պատգամների, մեր հայրերի Աստվածաբանական, կրոնական գաղափարներին, ապրումներին

փոխանցումը մեր ժողովուրդին, նրա այսօրվա ձգտումներին և կարիքներին պատասխան տալու մեր հարկավորությունը: Այստեղ բոլորս ծանոթ ենք այն իրողությանը, որ 70 տարիները կրոնական տեսակետից որքան ծանր տարիներ են եղել մեր երկրում՝ Հայաստանում և ընդհանրապես նախկին սովետական շրջանում: Ես անցյալի մասին խոսք չունեմ ասելիք: Մի սքանչելի ճշմարտություն կա այն խոսքին մեջ, որ ասել է աշխարհի իմաստուններից մեկը՝ «Աստվածն անգամ պատմությունը չի կարող փոխել»: Այդ պատմությունն ապրված է: Այդ մասին դատաստան անել, այդ մասին երկարորեն խոսել անհրաժեշտ չէ այժմ: Հիմա կարգախոսն այն է, որ մեր Եկեղեցին վերստին այնպիսի կենսունակություն պետք է ստանա մեր ժողովրդի կյանքի մեջ, որ այլևս մեր ժողովուրդն ինքն իրեն մեր Եկեղեցու պաշտոնյաներից լքված չզգա, որպեսզի օտար քարոզիչներ չգան և պարապը լեցնելու համար ապազգայնացուցիչ, իմ ըմբռնումով՝ հակաքրիստոնեական, քրիստոնեական անունին տակ այսպես պիտակված գաղափարաբանություններ կամ հերետիկոսություններ չտարածեն մեր ժողովուրդին մեջ: Նրանց մասին ճառ խոսել, նրանց մասին դատապարտական խոսք ասել, դա չի բավարարի մեզ, դա պատվաբեր էլ չէ մեզ համար: Մենք պետք է լծվենք դրական աշխատանքի և դրա համար մենք պետք ունենք ուժականության, մարդուժի:

Այդ ինձ կբերի այն հիմնական իրողության, որ մեր գործունեության երրորդ բնագավառն է լինելու: Որպեսզի մեր գործունեության այս երկրորդ դաշտը պտղաբեր լինի՝ երրորդն անհրաժեշտ է: Դա մեր հոգևորականության՝ նո՛ր սերնդի պատրաստության անհետաձգելի գործն է: Ես ամբողջ կյանքումս եղել եմ հոգևոր ճեմարանի ուսուցիչ: Դպրեվանք ենք ասում Կիլիկյան Աթոռի մեջ, Ժառանգավորաց վարժարան ենք ասում Երուսաղեմին մեջ. Հոգևոր Ճեմարանը **սիրտն** է Ամենայն Հայոց Կաթողիկոսության, ինչպես դա ասում ենք մենք Կիլիկյան դպրեվանքին համար: Հիսուսն անգամ, Աստվածորդի լինելով, Աստվածային ուժով գործելու ատեն մարդի՛կ ընտրեց, մարդոցմո՛վ գործեց, 12 առաքյալները, նրանց հետևողները. ես ի՞նչ կարող եմ անել անհատապես: Մի կյանք ունեմ, այդ կյանքն եմ տվել: Ինչ որ Աստված է տվել, դա կուտամ, բայց դա ի՞նչ արժի առանց հոգևորական նոր սերունդի պատրաստության, աջակցության և այնպիսի հեռանկարային գաղափարով աշխատանքին, որ սնուցված լինի Ավետարանի և մեր հայրերի ոգով: Ես մեծ հիացումով եմ հետևել Գևորգյան Ճեմարանի պատմությանը: Ինձ համար ներշնչող ուսուցիչ է եղել Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը: Առանց նրան տեսած լինելու, առանց նրան լսած լինելու մի ուրիշ դեմք՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գրքերը ինձ համար եղել են կազմավորիչ գրքեր՝ լինին նրա քարոզները, լինին նրա գիտական ուսումնասիրությունները: Եվ այսօր ինչպե՞ս պիտի ճանաչվի Սուրբ Էջմիածինը, ինչպե՞ս պիտի ճանաչվեն մեր նվիրապետական մյուս Աթոռները, միայն անցյալը հիշեցնող նվաճումների հիշատակո՞վ, թե՝ նո՛ր մարդերով, դեմքերով, որոնք կարողանան տիրապետել իրենց հոգու զորությամբը, հավատքը տարածել մեր ժողովրդի մեջ ամեն բանից առաջ իրենց անձնական կյանքի օրինակովը, իրենց ուսումովը արդի աշխարհի ըմբռնումներին համաձայն քրիստոնեությունը բացատրելու, տարածելու իրենց արվեստով: Դա պատրաստության գործ է և դրա համար իմ եղբայրներից խնդրում եմ, որ իրենց մտքի և հոգու, աղոթքի և գործի ալաց-

քը դարձնեն դեպի Հոգևոր Ճեմարանը, դեպի նոր հոգևորականության պատրաստումը:

Ես չեմ ուզեր տարածվիլ այն մյուս հեռանկարների վրա, որոնք նշել եմ այստեղ՝ իմ նոթատետրում և որոնց մասին հետո ես կգործեմ: Բայց չեմ կարող զեղչել իմ այդ ցանկիցը այն չորրորդը, որ մեր հայրենիքի զորակցության մեր պարտականությունն է: Մեր Եկեղեցին շաղախվել է հայ կյանքին մեջ: Օտար մարդկանց երբ լսեք, օտար աստվածաբանների գաղափարներին երբ ուզեք հաղորդ դառնալ, անոնք ասում են, որ կրոնք և ազգ իրարից տարբեր են: Ես քրիստոնեական իմ ըմբռնումով ասում եմ, որ դա սխալ է, որովհետև որտե՞ղ պիտի գործի Աստված. մարդկա՛նց մեջ պիտի գործի: Մարդիկը ազգերից են բաղկացել: Այսօր Անգլիական մեծ Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Եկեղեցին ժողովրդի, ազգի կազմավորման ընթացքին մեջ կազմավորիչ դեր է խաղացել: Ինչու է գտել Մեսրոպ Մաշտոցը մեր գիրը. առաջին և ամեն բանից վեր՝ Աստվածաշունչը թարգմանելու համար: Խորհրդային շրջանի մեր գիտնականներից շատերը մոռանում էին այդ մեկը և ասում էին, որ նա գիրը գտել է Հայաստանը փրկելու համար: Բնականորեն սա ճիշտ է. բայց այս իր գործի բնական արդյունքն ու բարիքն է եղել՝ իր ժողովրդին սեփական ազգային դիմագիծ տալ իր այբուբենով: Դրանով ազգային մեծ նշանակություն ունի այդ դեպքը: Մեր Եկեղեցիին ո՞ր էջը բանաս ու չտեսնաս այնտեղ ազգը: Եվ այսօր մեր ազգը եկել է այնպիսի մի հանգրվանի, որ անկախ, ազատ պետության հանգրվանն է, որ մենք քանի-քանի տասնամյակներ, եթե ոչ հարյուրամյակներ երազել էինք: Ես չեմ կարող մոռանալ, եղբայրներ, այն պահը, երբ մանուկ էի իմ հայրենի գյուղին մեջ և երբ մենք բացում էինք մեր ձեռքերը, տարածում էինք մեր թևերը և ասում էինք.

«Ազատն Աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատություն գրկեցի...»:

Այդ ազատությունը եկել է, անկախությունը եկել է: Աստծուն փառք տանք, բայց մենք արժեցնենք Աստուծո այդ շնորհքը: Ոչ մի պետություն աշխարհումս կարող է կատարյալ լինել, ոչ մի անձ կարող է կատարյալ լինել. բայց հենց այս մեր պետությունն է, և մենք պետք է, որ մեր բոլոր ուժերովը նրան զորավիգ կանգնենք. պատմության դիմաց ենք կանգնել և գալիք սերունդների դիմաց. թող մարդիկ չասեն մեզ, թե այս բոլորը պատահեցին «վասն մեղաց մերոց»: Գիտեք մեր պատմաբանների այդ նշանավոր խոսքը, որով հաճախ ասում են, որ այս աղետը պատահեց մեզ վասն մեղաց մերոց: Եվ գիտնականներից շատերն ասում են սա միջնադարյան քրիստոնեական ոչխարամտության գաղափարաբանության արտահայտություն է: Տնտեսական պատճառներ կան, քաղաքական պատճառներ կան մեր պատմությունը բացատրող: Դա ճիշտ է: Բայց ո՛չ ամբողջությամբ: Մեր ազգի չարիքներից շատերը եկել են իսկապես «վասն

մեղաց մերոց», մեր ունեցած թերություններից, մեր ունեցած ներքին հակառակություններից, մեր դրսևորած ճղճիմություններից և ընդհանրականը երկրորդականին ու մասնականին զոհելու մեր փորձությունից: Այսօր այս պետությունն ունենք: Եկեք դրան ուժ լինենք իբրև Եկեղեցի:

Այդ աշխատանքի գլխավորագույն միջոցներից մեկը «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամն է: Եվ կխորհեմ մեր հանրապետության նախագահը իմաստությամբ վարվեց, երբ այդ մարմինը ուզեց կազմել, Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին դիմեց, որպեսզի նրանք անդամ լինեն Կենտրոնական հոգաբարձության ժողովին, և մենք եղանք, մնացինք ու կմնանք զորավիգ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին: Ճիշտ է, դժվարություններ կան, ինչպես կասի ժողովուրդը՝ «ծուռ նստենք՝ շիտակ խոսենք»: Կարող են այստեղ-այնտեղ թյուրիմացություններ լինել, այս մարդը վիրավորվել, այն կազմակերպությունը թերևս դժվարություն ունենա, բայց պետք է համահայկական նկարագրով, «ՀԱՅԱՍՏԱՆ» անունով մկրտված այդ Հիմնադրամը արժեցնենք հայրենաշինության համար: Ես հիշում եմ, սրբազան եղբայրներիցս շատերն էլ հիշում են, որ երբ այս գաղափարն առաջարկվեց, հրապարակ դրվեց, այն ատեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իմ անմոռանալի նախորդը պիտի ասեմ այժմ, Վազգեն Առաջին Կաթողիկոսը, գաղափար ունեցավ եպիսկոպոսաց հետ խորհրդակցության ընթացքին եկեղեցուն վստահել այդ Հիմնադրամի գործը: Եկեղեցին չէր կարող իր ուժերովը ամբողջ այդ բեռը վերցնել: Բայց իր ամբողջական և անվերապահ մասնակցությունը բերեց, բերում է և բերելու է «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին:

Վերջապես ես կուզեի իմ խոսքին հինգերորդ կետին անդրադառնալ, որովհետև այստեղ ոչինչ լսեցի, հուսամ քիչ ետքը կարող եմ լսել և ուրախ կլինեմ լսելու, տնտեսական հարցի մասին: Նախորդ ժողովների ատենագրությունները կարդացի: Ազգային-Եկեղեցական Ժողովների ընթացքում միշտ տրվել է Մայր Աթոռի տնտեսական կացության պատկերը և եղել են հարկ եղած վերլուծումները: Բնականորեն այստեղ ժամանակ չունենք մանրամասնություններով զբաղվելու: Ամենապատիվ Տեր Թորգոմ Պատրիարքն իր զեկույցի մեջ, այդ ընդարձակ տեղեկագրում արդեն որոշ տրվյալներ հաղորդել է այդ մասին: Շատ շնորհակալ եմ իր արած այդ աշխատանքի համար: Զգիտեմ, հետագային նոր կազմվելիք Գերագույն Հոգևոր Խորհրդին հետ կնստենք, կծրագրենք, թե ինչ պետք է անենք՝ տնտեսական միջոցներ ձեռք բերելու համար: Բայց, սիրելի եղբայրներ, որտեղից էլ որ գալիս եք, ուզում եմ ձեզ իմ մեկ մտածումը փոխանցել այստեղ մտերմորեն տեղի ունեցող խոսակցության այս շրջանակում: Մենք պարտավոր ենք որդեգրել տնտեսական մի նոր քաղաքականություն: Այդ պիտի լինի այն մտքով և նպատակով, որ Մայր Աթոռը դրվի ապահով հիմքերի վրա և մնայուն եկամուտների միջոցներով հառաջ տանի իր գործը: Կախում ունենալ կամավոր նվիրատվություններից, պատահական նվիրատվություններից, անկեղծ և իսկապես ազնիվ մեծ բարերարների նվիրատվություններից՝ դա աքանչելի երևույթ է, մեր ժողովուրդի կամավոր մասնակցության գեղեցիկ արտահայտություն է, բայց դա չի կարող լինել մնայուն քաղաքականություն տնտեսական տեսակետով և պետք է որ մենք նստենք Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ, և դուք էլ ինչ գաղափարներ որ ունենաք, մանավանդ նրանք, ովքեր գալիս են այնպիսի երկրներից, որտեղ տնտեսական այդ երևույթներն ավելի զարգացյալ վի-

ճակին մեջն են, մենք լծվենք **մնայուն ֆոնդերի** հիմնադրման, այնպիսի ֆոնդեր, հիմնադրամներ, որոնց եկամուտը, շահարկումը մեզ համար կարող է տալ տոկուն կուվաններ, կարող է հայթայթել ապահով միջոցներ այն գործերն անելու, որոնց առաջ կգտնվի մեր Եկեղեցին և հատկապես Մայր Աթոռը: Ներքին թեմեր, արտաքին թեմեր, յուրաքանչյուրն իր պարտականությունը պարտավոր է կատարել ոչ թե միայն «Լուսավորչի լումա»-ի ձևով: Դա սքանչելի գաղափար է: Ավետարանի Այրի կնոջ լումայի այդ կամավոր, ինքնաբուխ կերպով կատարված նվիրատվությունը Հիսուսի գնահատանքին է արժանացել ամենայն բարձր աստիճանին: Բայց մենք լումաները նկատելով իբրև բարեպաշտության արտահայտություն, նրանց կողքին պետք է գտնենք այնպիսի միջոցներ, որ թեմերն իրենք իրենց մասնակից զգան իրենց Մայր Աթոռի, իրենց հոգևոր տան տնտեսական առողջ հիմքերի վրա դրման մարզում և նրա գործունեության բարվոք ընթացման և ատոք պտղավորման համար:

Ահավասիկ մի քանի մտածումներ, որոնք ես ցանկացա ձեզ հետ բաժանել այս առաջին խոսքումս և այս կարճ ժամանակում: Եթե երբեք դուք ունենաք գաղափարներ այս բոլորի մասին, խնդրում եմ այդ գաղափարներն արտահայտեք մեկ հիմնական առաջադրանքով. ինչպե՞ս անել, որ բարեկարգվի Հայոց Եկեղեցին: Այս իմ վերջին խոսքն է.

Բարեկարգություն Հայաստանյայց Եկեղեցվո պետք է լինի մեր հեռակետը, սևեռակետը, նշանակետը, ինչ կուզեք, ասեք: Եվ բարեկարգություն կնշանակե Երուսաղեմի նախկին Պատրիարքներից Թորգոմ Գուշակյան պայծառիմաստ մեծ Պատրիարքի բացատրությամբ **բարվոք պահպանումը այն կարգին, որ կյանք է, ոչ թե միայն կառույց,** այսինքն՝ Եկեղեցին բարեկարգել այնպես, որ նա դառնա սքանչելի մեկ ուժ, գործուն ներկայություն և կենսունակ ներգործություն մեր ժողովրդի կարիքին համար: Թող իմ այս առաջին խոսքին վերջին բառերը լինին **«աշխատենք վասն շինութեան և բարեկարգութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց և ազգիս հայոց»:**



Առաջին շնորհավորանքը

Ազգային Եկեղեցական Ժողովին մասնակցած պատգամավորների խմբանկար